ԹԱՄԱՐՅԱՆ ՄԱՐՈՒՍ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԶԵՅԹՈՒՆՈՒՄ

Հայերը Զեյթունում և Կիլիկիայում հաստատվել են անհիշելի ժամանակներից: Սակայն իբրև զանգվածային առաջին գաղթի թվական պատմական վավերագրերում նշվում է 451 թ., երբ Վարդանանց պատերազմից հետո պարսիկների վարած դաժան հարկային քաղաքականության պատճառով շատ հայեր ստիպված թողնում էին հայրենիքն ու ուղղվում դեպի Փոքր Ասիա և Կիլիկիա: Արաբական տիրապետությունը Հայաստանում ավելի է ուժեղացնում հայերի հոսքը դեպի այդ երկրամաս, քանի որ Արաբական խալիֆայության հարկային, սոցիալական և ազգային ճնշումները երկրի վիճակը անտանելի են դարձնում: Ստեղծված պայմաններում հայրենիքը թողնում են անգամ հայ նախարարներից շատերը՝ իրենց ժողովրդի հետ անցնելով Բյուզանդիա, որն էլ իր հերթին նպաստում էր գաղթին: Հեռանալով հայրենի երկրից ու բնաշխարհից՝ հայերը հիմնականում հաստատվում էին Միջերկրական ծովի ափերին գտնվող քաղաքներում, որոնք հայտնի էին առևտրով: Հաստատվելով այդ քաղաքներում՝ հայերն էլ զբաղվում էին առևտրով և արհեստներով, իսկ գյուղերում բնակվողները՝ հողագործությամբ: Ա. Ալպոյաճյանը իր «Պատմական Հայաստանի սահմանները» աշխատության մեջ հանգամանորեն քննելով հայերի գաղթի շարժառիթներն ու դրանց ժամանակաշրջանները՝ եզրակացնում է, որ «Արդեն Հարավային Տավրոսի և Կիլիկիո մեջ հայերը հաստատված էին Նիկեֆոր Փոկասի (963-969) օրերեն սկսյալ: Հայերով լեցվեցավ Սեբաստիա, Կեսարիա և այլն, ինչպես նաև Իսոսի ծոցին բոլորտիքը, որ անկե վերջ Հայոց ծոց հորջորջումը ստացավ»[1]:

Զեյթունում գործել է այն հասարակական-սոցիալական կարգը, որը գոյություն է ունեցել Կիլիկյան թագավորությունում, սակայն ելնելով ժամանակի պահանջներից՝ Զեյթունում հաստատված սոցկարգն սկսեց ավելի նմանվել Եվրոպայում գոյություն ունեցող ֆեոդալական կարգերին:

Զնայած թուրքական լայնածավալ պետության սահմաններում գտնվելուն՝ գավառակը ապրել է ինքնամփոփ կյանքով և ղեկավարվել է չորս իշխանական տների կողմից, որոնցից մեկը կոչվում էր իշխանապետ, իսկ մյուսները՝ իշխան: Նրանց անվանել են նաև ըխթիյոր (ծեր) կամ չորպաճիներ[2]: Իշխանապետը քաղաքի կառավարիչն էր, որին ենթարկվում էին ոչ միայն մյուս իշխանները, այլև բնակիչները:

Զնայած իշխանին կամ իշխանապետին ենթակա լինելուն՝ Զեյթունի հայ բնակչությունը մեծ նվիրվածությամբ է ծառայել Հայ Եկեղեցուն: Դա է վկայում Զեյթունում հոգևորականների ազդեցիկ դիրքը: Ըստ որոշ պատմագիրների՝ Եկեղեցին մասնակցություն չի ունեցել աշխարհիկ գործերին և «Այս պզտիկ հանրապետութեան մէջ եկեղեցին միշտ բաժանված էր պետութենէն»[3]: Այսպիսի կարծիք, սակայն, ոչ բոլոր պատմաբաններն ունեն:

---

[1] **Ալպոյաճեան Ա.,** Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե , 1950 , էջ 96:

[2] **Գալուստյան Գր.** , Մարաշ կամ Գերմանիկ – հերոս Զեյթուն, Նիւ- Յորք, 1934 թ., էջ 99:

[3] «Զեյթունի պատմագիրք», Բուենոս Այրես, 1960 թ., էջ 107:

Հ. Պողոսյանը այն հաստատ համոզումն ունի, որ հոգևորականների դասը միշտ էլ խառնվել է աշխարհիկ գործերին, մանավանդ որ արքեպիսկոպոսը կառավարության կազմի մեջ է եղել: Եվ վերջապես «1862 թ. ապստամբությունից հետո եկեղեցականների ներկայացուցիչները չէին արդյո՞ք, որ խնդրագրերով գնացին Կոսանդնուպոլիս, և ապա Փարիզ»[4],- գրում է նա:

Զեյթունցիները միշտ էլ ամբողջությամբ պատկանել են Հայ Առաքելական Եկեղեցուն, սակայն 1866-67 թթ. քաղաքական տարբեր խնդիրների առաջացմամբ Զեյթունում կատարվում է կրոնական մասնաբաժանում, և հայերից ոմանք հարում են կաթոլիկությանը, իսկ 1878 թ. բողոքականությանը, որը Մարաշից մուտք է գործում նաև Զեյթուն: Սակայն այս շարժումները լայն տարածում չեն ունենում. այս հարանվանություններում ընդգրկվում են մոտավորապես 20-ական ընտանիքներ: Կաթոլիկ հայերն իրենց եկեղեցական պաշտամունքը կատարում էին այդ նպատակով իրենց տրամադրված հատուկ սենյակում, որին կից ունեին նաև փոքրիկ դպրոց: Բողոքականներն էլ ունեցել են փոքրիկ ժողովարան և դպրոց:

Զեյթունցիները միշտ աչքի են ընկել իրենց ջերմ կրոնասիրությամբ, նախանձախնդրությամբ դեպի իրենց կրոնն ու հավատալիքները: Եվ քանի որ շատ հաճախ կրոնասիրությունն ու ազգասիրությունը հանդես են եկել միասնաբար, ուստի զեյթունցիների համար խորթ է եղել ցանկացած կրոնական հարանվանություն: Սակայն 19-րդ դարի երկրորդ կեսից կրթության և ուսման հանդեպ բուռն ցանկության հետ կապված նվազում է արտաքին թշնամանքը կաթոլիկության, բողոքականության և այլ հարանվանությունների հանդեպ: Բացի այդ, Զեյթունն իբրև ինքնավար կյանքով ապրող տարածաշրջան իր վրա էր հրավիրել ժամանակի տարբեր միսիոներական ու գաղափարական կազմակերպությունների ուշադրությունը, որոնց համար բարենպաստ պայմաններ են ստեղծվում Զեյթունում իրենց աշխատանքային գործունեությունը ծավալելու համար:

Եկեղեցին ունենալով իբրև իրենց հայեցի կյանքի շարունակության գրավական՝ զեյթունցիներն արդեն իսկ 17-րդ դարի առաջին կեսում ունեին 8 եկեղեցի՝ Ս. Սարգիս, Ս. Հրեշտակապետ, Ս. Հակոբ Մծբնա, Ս. Աստվածածնա, Ս. Կարապետ, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Պարսամ և Ս. Թեոդորոս: Հետագայում կառուցվում են Ս. Պողոս-Պետրոս և Ս. Հովհաննես եկեղեցիները: 1884 թվականի հրդեհի ժամանակ այս եկեղեցու հետ այրվում են նաև նրանում գտնվող մատյանները, որոնց մեջ էր նաև հայտնի Վասիլի Ավետարանը: Հրդեհվում են Ս. Սարգիս, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Աստվածածին, Ս. Հակոբ և Ս. Հովհաննես եկեղեցիները: Որոշ ժամանակ անց վերակառուցվում են Ս. Աստվածածինը՝ Սուրենյան թաղում, Ս. Սարգիսը՝ Ցաղուպյան, Ս. Հովհաննեսը՝ Շովրոյան և Ս. Գրիգոր Լուսավորիչը՝ Ենիտունյան թաղերում: Ս. Աստվածածին եկեղեցում իբրև թանկագին մասունք պահպանվել է 12-րդ դարում Հռոմկլայում գրված մագաղաթյա պատկերազարդ մի Ավետարան:

Զեյթունի յուրաքանչյուր թաղ ունեցել է իր եկեղեցին, որում նստել է թեմի առաջնորդը: Մինչև 1850-ական թվականները վանքի վանահայրերը եկեղեցու նկատմամբ ունեցել են անսահմանափակ իրավունք: Վանահայրը վանքի ունեցվածքը «կառնե, կծախե, կշինե,

[4] **Պողոսյան Հ.,** Զեյթունի պատմությունը , Եր–ան, 1969, էջ 70:

կքակե ըստ իր քմահաճոյից, և նահապետական ավանդական դրությամբ մը, ոչ ոք իրավունք ունի միջամտելու հայր սուրբին գործերուն»[5]:

Բնակչությունը վանքին վճարել է պտղի և աթոռի հարկեր: Բացի դրանից, ուխտագնացությունների ժամանակ բնակչությունը մեծ քանակությամբ նվերներ է տվել վանքին: Զեյթունցիները հարկ են վճարել նաև թաղման, կնունքի և եկեղեցիների ու վանքերի վերանորոգության համար՝ «հանուն շինության և նորոգման»: Սակայն շուտով նրանք սկսում են անտարբերություն ցուցաբերել եկեղեցու հարկերը վճարելու նկատմամբ: «Զեյթունի պատմագրքում» այս մասին ուշագրավ տեղեկություններ կան: Մի անգամ Ս. Սարգիս եկեղեցու Տեր Սարգիս քահանան քաջություն է ունենում չընդունել սրբազանին, որն եկել էր պտղի հարկը հավաքելու: Այս դեպքից հետո Զեյթունում հրավիրվում է աշխարհիկ վերնախավի և եկեղեցականների ժողով-հավաք: Այստեղ ընտրվում է վանական խորհուրդ, որին իրավունք է տրվում տնօրինել վանքի բոլոր հասույթները և ունեցվածքը:

Զեյթունցիներն աչքի են ընկել հատկապես իրենց եկեղեցական ծիսական սովորույթներով: Զցանկանալով ունենալ «օտար» հոգևորական՝ նրանք ծայրաստիճան բծախնդիր են եղել հատկապես քահանայի ընտրության հարցում. այս հարցում նրանք նախապատվությունը տալիս էին այն թեկնածուին, ով սերում էր քահանայի ընտանիքից: Թեկնածուի ողջ կյանքը ենթարկվում էր քննության. նա չէր կարող գողության կամ մարդասպանության մեջ մեղադրված լինել (պատերազմում մարդ սպանելը հանցանք չէր): Շատ կարևոր էր. «Հին և Նոր կտակարաններում քիչ-շատ հմուտ ըլլալը, քարոզելու կարողութիւնը, ազգասիրութիւն ու պատերազմասիրութիւնը, ինչպես նաև ֆիզիկական կազմն ու կորովը: Ընծայացուին կնոջ հաւանութիւնն ալ կառուներ ձեռնադրութենէն առաջ՝ ժողովին կողմէ տաներեց քահանան ղրկուելով»[6]:

Եթե այս ամենը գոհացուցիչ էր, դիմում էին Ս. Աստվածածին վանքի եպիսկոպոսին՝ քննելու ընծայացու քահանային: Եպիսկոպոսը քաղաք էր իջնում մեծ տոնակատարությամբ՝ իշխանների, հոգևորականների և ժողովրդի ուղեկցությամբ, աղոթելով և շարականներ երգելով: Շաբաթ երեկո կատարվում էր «Կոչումի» արարողությունը՝ ընծայացուին լողացնելուց հետո: Կիրակի առավոտյան եպիսկոպոսը պատարագ էր մատուցում՝ ձեռնադրելով և օծելով նորընծային: Ապա սկսվում էր նորընծա քահանայի քառասունքը, որը նա անցկացնում էր եկեղեցու խցում՝ փիլոնով ծածկված, աղոթքով և ծոմապահությամբ, Սաղմոս ու Նարեկ կարդալով և «քահանայական պարտականութիւններու վարժութիւններով»[7]:

Այդ քառասուն օրվա ընթացքում ժողովուրդը պահքի կերակուրներ է ուղարկում նորընծա քահանային: Ամեն երեկո նորընծան եկեղեցի էր մտնում, դեմքը ծածկած ծունր էր իջնում գրակալի առաջ, Ավետարան ընթերցում և նորից վերադառնում իր խուցը: Քառասուներորդ օրը մի քահանա էր գալիս, կատարում նորընծայի լվացումը և հագցնում կնքահորից նվեր ուղարկված սպիտակեղենը, գոտին և «մերտին մեշլահը ըսուած վերար-

[5] «Զեյթունի պատմագիրք», էջ 107:

[6] **Գալուստյան Գր.**, Մարաշ կամ Գերմանիկ – հերոս Զեյթուն, էջ 106:

[7] Նույն տեղում, էջ 107:

կուն»[8]: Հաջորդ օրն իսկ նորընծան մատուցում էր իր անդրանիկ պատարագը, ապա ժողովրդի առաջնորդությամբ գալիս իր տունը՝ օրհնելով իր կնքահոր կողմից պատրաստված մատաղը: Սովորույթ է եղել, որ նորընծայի կինը, շրջապատված այլ երեցկիններով, ծածկվել է սավանով և վերմակով, ականջները փակած բամբակով,իսկ նորընծա քահանան նրա գլխին մի քանի էջ Ավետարան է կարդացել: Ենթադրվել է, որ երեցկինը, լսելով ամուսնու ձայնը, կմահանա, ինչպես որ մի անգամ իրոք պատահել է: Սակայն Կարապետ եպիսկոպոսը վերացրել է այս սովորույթը: Նորընծան մատաղն օրհնելուց հետո վերադառնում է եկեղեցի, հանում հոգևորականի իր զգեստը և գալիս իր տուն՝ մասնակցելու ճաշկերույթին: Այս բոլորից հետո նա վերադառնում է իր վանքը և մեկ ամբողջ տարի իրավունք չի ունենում գնալ իր տուն: Նա սնվում է պահքի կերակուրներով և միայն շաբաթ և կիրակի օրերին կարող է յուղով կերակուրներ և մատաղ ուտել:

Նույնպիսի բծախնդրությամբ զեյթունցիները վերաբերել են թաղմանը, հարսանիքին, երեխայի ծնունդին և մկրտությանը: Ցանկացած առիթի և արարողության ժամանակ գլխավոր դերը պատկանել է հայ քահանային, առանց որի չի կատարվել ուրախության կամ տխրության ոչ մի ծես:

Առհասարակ զեյթունցիներն աչքի են ընկել իրենց ծայրահեղ եկեղեցասիրությամբ: Յուրաքանչյուր զեյթունցի ամեն օր պարտադիր պետք է գնար եկեղեցի և մինչև ժամերգությունը չավարտվեր, ոչ ոք չէր կարող տեղից շարժվել. դա համարվում էր գայթակղություն և պատժի առիթ տալիս թաղի իշխանին ու տաներեցին: Թերևս սրանով էլ կարելի է պայմանավորել այն հանգամանքը, որ Զեյթունից են սերել հայ նշանավոր եկեղեցականներից շատերը: Բավական է նշել միայն, որ Կիլիկիայի կաթողիկոսական աթոռին են բազմել զեյթունցի եպիսկոպոսներ Սիմոն Ա Զեյթունցին (1539-1545), Ղազար Ա Զեյթունցին (1545-1547), Խաչատուր Բ Զեյթունցին (Խաչիկ Ուլնեցի), ով հայտնի է նաև Երաժիշտ անունով (1560-1584): Իսկ 1726-1730 թվականներին Էջմիածնի կաթողիկոսական աթոռին է բազմել Կարապետ Բ Ուլնեցին: Զեյթունցի են եղել նաև Կ. Պոլսի Սարգիս Ուլնիո (1587-1590) և Սարգիս Բ Պարոն-Տեր Զեթունցի (1592-96) պատրիարքները:

Զեյթունում, սակայն, հայ հոգևորականը չի սահմանափակվել միայն ծիսական արարողություններով: Զեյթունում կրթական համակարգը սկիզբ է առել և շարունակվել է միայն Եկեղեցու շնորհիվ ու միջոցներով: Մինչև 19-րդ դարը Զեյթունում կրթական ոչ մի հաստատություն չի գործել. լինելով ազատատենչ ու հայրենասեր ժողովուրդ՝ կրթական առումով, սակայն, զեյթունցիները շատ հետամնաց էին: Աստվածաշունչ և այլ գրքեր միայն եկեղեցականն է իրավունք ունեցել կարդալու: Եվ փաստորեն մինչև 1850 թ. Զեյթունում 23 գրաճանաչ մարդ է եղել և միայն 3 մարդ է կարողացել կարդալու հետ մեկտեղ նաև գրել:

Առաջին անգամ 1848 թ. Հովհաննես Գառնեցի վարդապետը Ս. Հովհաննես եկեղեցուն կից հիմնում է մի դպրոց, ուր դասավանում են ինքն ու Տ. Ղազար քահանան: Սկզբնական շրջանում շատ քչերն էին հաճախում այս դպրոցը, սակայն գնալով Զեյթունում գաղափարական լուսավորության փափագի շնորհիվ ավելանում է երկսեռ դպրոցների քանակն ու մինչև 1915 թ. Զեյթունում աշակերտների թիվը հասնում է 2000-ի: Հայ

[8] Նույն տեղում:

ազգայիններից շատերը, հատկապես 1862 թ. ապստամբությունից հետո իրենց ուշադրությունը սևեռում են Զեյթունին: Կարճ ժամանակ անց Զեյթունի ուշիմ և խելացի երեխաներից շատերը տեղավորվում են Պոլսի, Երուսաղեմի և այլ հայտնի վարժարաններում: Այսպես՝ Մկրտիչ վրդ. Տիգրանյանը զեյթունցի յոթ պատանիների տանում է Պոլիս և տեղավորում Նուպար Շահնազարյան վարժարանում, իսկ 1871 թ. Երուսաղեմի միաբան Տ. Աթանաս վարդապետը դարձյալ յոթ ուշիմ զեյթունցի պատանիների տանում է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում սովորելու:

Ժամանակի ընթացքում Զեյթունի կրթական գործն սկսում են իրենց ձեռքն առնել առանձին ընկերություններ ու կազմակերպություններ, որոնք ձեռնամուխ են լինում կրթության տարածմանը ոչ միայն Զեյթունի չորս թաղերում, այլև հարակից գյուղերում: Զեյթունի ուսուցչական կազմը համալրելու նպատակով զեյթունից աշակերտներ են ուղարկվում հեռավոր քաղաքների բարձրագույն վարժարաններ՝ Պոլիս, Էջմիածին, Արմաշ, Երուսաղեմ, Սիս, Կարին, Սեբաստիա, Տարսոն, Պրուսիա և այլուր: Սակայն այս զարթոնքը տևում է մինչև 1915 թ., երբ մարտի առաջին իսկ օրերից փակվում են Զեյթունի և շրջակա գյուղերի բոլոր վարժարանները:

Զեյթունի նշանավոր կրթական մշակներից են Մնացական Սեմերճյանը (Զեյթունցի), Սմբատ Բյուրատը (Տեր Ղազարենց), Նշան Եզեկիելյանը, Խաչիկ Ս. Ցաղուպյանը, Հարություն Ս. Ցաղուպյանը, Գրիգոր Գասպարյանը և ուրիշներ:

Բացի կրոնական և կրթական գործերից հայ եկեղեցականը Զեյթունում մասնակցել է նաև կռիվներին ու պատերազմներին, թուրք կառավարության հետ բանակցություններին ու միջնորդություններին:

Չկա Զեյթունում տեղի ունեցած մի կռիվ, ճակատամարտ կամ պատերազմ, ուր զենքը ձեռքին հայտված չլինի հայ հոգևորականը այն էլ միշտ զինված, բնակիչներին ոգևորող և մարտնչող: Այս առիթով տեղին է նշել Տ. Բարդուղիմեոս վարդապետ Թագաճյանին՝ «վեղարավոր հերոսին», ով իբրև քաջարի հոգևորական 1895-96 թթ. կռվի ժամանակ իր սրի տակով անցկացրել էր մոտ 700 թուրքական զինվորների, ովքեր համբուրելով իր լանջախաչն ու Զեյթունի դրոշակը՝ գերի են վերցվել զեյթունցիների կողմից: Մի քանի անգամ բանտարկվել է և աքսորվել Զեյթունից, սակայն միշտ վերադարձել է հայրենիք և ի վերջո 1915 թ. հայրենակիցների հետ բռնել է երկարատև աքսորի ճամփան:

Արժանահիշատակ է Նիկողայոս եպիսկոպոս Դավթյանը, ում թուրքերը կոչում էին Տելի Մահրասա իր քաջության և խիզախության համար, իսկ հայերի շրջանում հայտնի էր Ֆոնուզի աղյուծ անունով: Պատմում են, որ մի օր Նիկողայոս եպիսկոպոսը, երբ եկեղեցում պատարագելիս է լինում, հայտնում են, որ չերքեզները հափշտակել են իրենց գյուղի այծերն ու տավարը: Եպիսկոպոսը թողնում է պատարագը կիսատ, զինվում և իր կտրիճներով մի քանի ժամում ետ է վերադարձնում ավարը, ապա գալիս վանք և զգեստավորվելով՝ շարունակում պատարագը:

Փաստորեն Զեյթունում Հայ Եկեղեցին իրականացրել է իրավական, կրոնական, պաշտպանական, մի խոսքով՝ պետական-պաշտոնական գործառույթներ: Ըստ էության Հայ Եկեղեցին ունեցել է հայկական պետության դերն ու նշանակությունը՝ նպատակ ունենալով միայն ապահովել իր զավակների հնարավորինս խաղաղ ու բարեկեցիկ կյանքը: